


239 C

Armenian Church Of Our Saviour

Ս. ՓՐԿԻԶ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ, ՈՒՍՏՐԻ



26697

Փետրուար 2, 1980
Այսպիսով ՓՔՐ. 11/80

Գերաշնորհ
Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ Եորք

Սիրելի Սրբազան Հայր,

Այսու կուզանք յայտնել Ձերդ Սրբազնութեան թէ եկեղեցւոյս տարեկան ծխական ժողովը գումարուեցաւ Կիրակի, Յունուար 27, 1980 եկեղեցական պաշտամունքէն ետք 90 անդամներու ներկայութեան: Բուժարկութեան մասնակցեցան 186 տրատու անդամներ: Եկեղեցւոյս անդամներուն թիւն է 593:

Օրինաւոր կերպով կատարուեցաւ ընտրութիւնը Միական Խորհուրդին, ընտրողական Յանձնախումբին եւ Հաշուեքննիչ Յանձնախումբին: Միական Խորհուրդի նորընտիր անդամներն են Տիարք Զաւէն Գասպարեան, Ղեւոնդ Յակոբեան, Վահան Արոյեան, Լեւոն Խաչատուրեան, Ճօրճ Մկրտիչեան եւ Տիկին Բէյ Կարապետեան: Յաջորդ առաւելագոյն քուէ ստացած անձն է Պրն. Յարութիւն Գասպարեան:

Համաձայն Ձերդ Սրբազնութեան նոյեմբեր 26, 1979 թուակիր թիւ 458 շրջաբերականին, ներփակ կը գտնէք եկեղեցւոյ տարեկան տեղեկագիրներու պրակը, ինչպէս նաեւ ծխական ժողովի ընտրութեանց արդիւնքը, ընտրութեանց քուէաթուղթէն օրինակ մը թեկնածուներուն անուններով եւ ստացած քուէներով, Թեմական Պատգամաւորներու անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը, եկեղեցական կազմակերպութեանց վարչական մարմիններու ատենապետներու անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը, Առաջնորդարանէն ղրկուած տպագրեալ տեղեկագիրները անհրաժեշտ ստորագրութիւններով, ծխական ժողովի ատենագրութիւնը, ծխական ժողովին ներկայացուած ելեւմտական հաշուեկշիռը եւ անդամներուն ղրկուած հրաւիրագրէն ու օրակարգէն օրինակ մը:

Յանձնելով վերոյիշեալ գրութիւնները Ձերդ բարձր նկատողութեան կ'սպասենք Միական Խորհուրդի ընտրութեանց վաւերացման:

Մնամք խոնարհաբար աղօթակից

Ի դիմաց Միական ժողովի

Եղիշ Կրք. Գլխեան

Եղիշէ Ս. Վրդ. Կիզիբեան, Հովիւ եւ Նախագահ

